Սուրեն Օհանյան
Եվրասիա միջազգային համալսարանի ռեկտոր,
աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Իրինա Բաբայան
Եվրասիա միջազգային համալսարանի
ուսումնամեթոդական և գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՄԿԾ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԱՄԱՍ

Հոդվածում ներկայացված են շրջանավարտների գործնական հմտությունների զարգացմանը, դրանց լուծման ուղիներին, մասնավորապես՝ կառուցվածքային ստորաբաժանումների ձևավորմանը Եվրասիա միջազգային համալսարանի փորձին առնչվող հիմնավորումներ:

Հիմնաբառեր. մասնագիտական հմտություններ, գործատու, տարածաժամանակային, ամբիոնային կենտրոն, բիզնես կենտրոն, իրավաբանական խորհրդատվական կենտրոն, տնտեսության ոլորտային կառուցվածք, բուհական ենթակառուցվածք, թարգմանչական կենտրոն, կրթական ծրագիր և այլն:

Գիտատեխնիկական առաջընթացը՝ որակական նոր զարգացումները, տնտեսության բոլոր ոլորտներում տեղեկատվության ստացման, մշակման, տարածման և օգտագործման ժամանակակից տեխնոլոգիաները, սկզբունքայնորեն փոխել ու բարելավել են մասնագետների վերարտադրության համար անհրաժեշտ բոլոր նախադրյալները: Փաստորեն, տեղի են ունեցել համակարգային և բովանդակային այնպիսի փոփոխություններ, որոնք իրենց արտահայտությունը դեռևս լիովին չեն գտել ՄԿԾ-ների կազմման և գործարկման աշխատանքներում: Անհամապատասխանություն է առաջացել նաև մասնագետների վերարտադրությամբ զբաղվող մանկավարժների մեթոդական պատրաստվածության և շրջանավարտ-մասնագետներին ներկայացվող աշխատանքային պահանջների միջև: Աշխատաշուկան պահանջում է նախ և առաջ մասնագիտական հմտություններ, իսկ բուհ-ը առաջարկում է առավելապես տեսական գիտելիք ապահովող ծրագրեր: Ավելին, ուսուցանողներն իրենք երբեմն դասընթացների շրջանակներում գործնական հմտություններին բավարար չափով չեն տիրապետում: Ընդ որում, մանկավարժների վերապատրաստումը սերնդափոխության և լուծման տեսակետից բավականին տևական ու բարդ խնդիր է, ինչն իր հերթին, այլ կարգի սոցիալ-տնտեսական

խնդիրների առնչվելով, ավելի է բարդացնում իրադրությունը: Հետևաբար կանգնած ենք մի լուրջ հիմնախնդրի առջև, որն այսօր հրատապ լուծում է պահանջում:

Այս հիմնախնդիրն առաջացել է մի քանի տարածաժամանակային, պատմա-քաղաքական ամենազանազան փոփոխությունների և զարգացումների հետևանքով: Եթե եվրոպական բարձրագույն ուսումնական հաստատությունները ներկայացվող հիմնախնդիրը լուծել են աստիճանաբար կրթական գործունեության կազմակերպման միևնույն հասարակական-քաղաքական համակարգում դիալեկտիկական զարգացման ճանապարհով, ապա ՀՀ բուհ-երի համար հիմնախնդիրը ոչ միայն նոր է անցումային փուլին բնորոշ հակադրությունների և նորահայտ իրողությունների պատճառով, այլ նաև բովանդակային առումով նախադեպ չունենալու ու հարկադրաբար փոփոխվելու արդյունք է: Ավելին, ՀՀ տնտեսության զարգացման դեռևս ցածր մակարդակի և կառուցվածքային դանդաղ վերաձևափոխումների պատճառով դեռևս անհրաժեշտ նախադրյալներ չեն ստեղծվում բարձրացված խնդիրը լուծելու համար: Այլ կերպ՝ ժամանակակից մասնագետներով ոչ լիարժեք ապահովվածության և թույլ զարգացած տնտեսության հետևանքով բազմաթիվ խոչընդոտներ են առաջացել, և մասնագիտական գործնական հմտություններով օժտված մասնագետների պատրաստման գործը կանգնել է լուրջ դժվարությունների առաջ: Այս յուրահատուկ պայմաններում, բնականաբար, կրթական իներցիոն (խորհրդային) գործընթացները պահպանել են իրենց կենսունակությունը:

Հիմնախնդիրն ունի մեկ այլ պատճառահետևանքային դրսևորում: Լսարանային տեսական դասընթացների և սեմինար (իբրև թե գործնական, սակայն դարձյալ տեսական ուսուցման մեթոդաբանությամբ) պարապմունքների ուսումնական պլաններով նախատեսված ժամաքանակի կառուցվածքային հարաբերակցությունը, խորհրդային ժամանակաշրջանի հետ համեմատած, քանակական և կառուցվածքային հարաբերակցության առումով պահպանվել է ի օգուտ առաջինի: Մեր օրերին բնորոշ ահռելի փոփոխությունները անտեսված են ծրագրերի մշակման ու գործարկման աշխատանքներում: Մի կողմից նվազել է դասախոսի՝ որպես գիտելիք փոխանցողի գլխավոր դերակատարումը, մյուս կողմից մեծացել է ուսանողի՝ որպես ինքնուրույնաբար գիտելիք ստացողի հնարավորությունների շրջանակը, որը մեթոդապես առավել բարձր արդյունավետություն կարող էր ապահովել: Այս առումով հատկանշական է, որ տեղեկատվության մշակման ու փոխանցման ոլորտը ՀՀ-ում իր զարգացման մակարդակով չի զիջում զարգացած երկրներին, սակայն այդ խնդրի նկատմամբ ՄԿԾ-երի ցածր պահանջները զգալիորեն սահմանափակում են ստեղծագործական մտածելակերպով ու գործնական հմտություններով մասնագետների պատրաստման հնարավորությունները:

Գործնական հմտություններով շրջանավարտ–մասնագետների պատրաստման խնդիրն այսօր ամենահրատապն է և հավասարապես ծառացած է բոլոր բարձրագույն ուսհաստատությունների առջև: Բարեբախտաբար, օրեցօր դրական նախադրյալներ են առաջանում խնդիրը լուծելու համար: Նախ՝ Հանրապետության տնտեսությունը զարգացման ու ոլորտային կառուցվածքի բարելավման ակնառու նշաններ է ցույց տալիս. տեղի է ունենում ոլորտային վերամասնագիտացում, ինչի հետևանքով մասնագետների վերապատրաստումը դառնում է ավելի հասցեական ու նպատակային, որովհետև ակտիվանում է գործատու-բուհ համագործակցությունը, այսինքն՝ բիզնեսը բուհին իր իրական պահանջներն է սկսում

առաջադրել: Երկրորդ՝ ներկայումս ընթացող գլոբալացման գործընթացները և Հանրապետության լայնամասշտաբ համագործակցությունը Եվրամիություն երկրների հետ, ուսանողների և բուհերի դասախոսական ու սպասարկող կազմի միջազգային փոխանակումներով պայմանավորված շփումները նոր հնարավորություններ են ստեղծում խնդրի լուծման համար: Դրանով պայմանավորված՝ նաև նոր պահանջներ են ի հայտ գալիս այն առումով, որ ՀՀ բուհերի շրջանավարտ-մասնագետները պետք է հմտություններով և կարողություններով չզիջեն եվրոպական բուհերի շրջանավարտներին: Դա են պահանջում նաև մասնագետների միասնական աշխատաշուկա ձևավորելու միջպետական պարտավորությունները:

ՀՀ տրանսպորտային տնտեսական շրջափակման պայմաններում, սահմանափակ կամ կիսամեկուսացված տնտեսության պարագայում նպատակահարմար ենք գտնում գործարկել խնդրի լուծման նաև այլ տարբերակներ: Այդ տարբերակները, որոնք մասնակիորեն Եվրասիա միջազգային համալսարանում փորձաքննություն են անցել, գործում են վերը նշված բոլոր իրողությունների առկայության դեպքում: Դրանք բավականին բարձր արդյունավետություն ապահովող ուսումնական գործընթացի բարելավման մեթոդական նոր հնարքներ են: Նկատենք, որ այդ տարբերակները զանազան դրսևորումներով լոկալ արտահայտված են գործատու (բիզնես)-բուհ համագործակցության ներկայիս սխեմաներում: Եթե համագործակցությունը բուհի և բիզնեսի միջև զարգացած երկրներում դարձել է գործնական անհրաժեշտություն, ապա ՀՀ-ում այդ կառույցները գործում են տարանջատ, երկուստեք ցածր արդյունավետությամբ՝ յուրաքանչյուրը ինքնուրույնաբար լուծելով իր խնդիրները:

Այսպիսով, ՄԿԾ-երի բովանդակային բարելավման և այսօրվա պահանջներին համապատասխանեցման նպատակով կարող ենք դիտարկել միմյանց հետ փոխկապակցված մեթոդական երկու առանձին ուղղություն.

1. տեսական գիտելիքի ուսուցում՝ մեթոդական նոր հնարքների կիրառմամբ,
2. գործնական հմտությունների զարգացում՝ նոր կառուցվածքների ձևավորմամբ:

Նշվածներից առաջինը ենթադրում է նախ և առաջ պահպանել գիտելիք ստանալու համար անհրաժեշտ հաջորդական շղթայի մեջ մտնող բոլոր անհրաժեշտ օղակների կրթական պահանջներին մոտ չափանիշները: Դիմորդների ընտրության ներկայիս գործող թույլ մրցակցային համակարգը անհրաժեշտ է համապատասխանեցնել որակյալ մասնագետների պատրաստման համար պահանջվող նախնական որակներին: Դիմորդասուղ այս փուլում բուհերը ֆինանսական ապահովության հասնելու նպատակով ընդունում են պահանջվածից զգալի ցածր գիտելիք ունեցող դիմորդներ: Աշակերտները, նկատի ունենալով ընդունելության պարզեցված ու հեշտացված շեմը, միջին և ավագ դասարաններում հայտնվում են դեմոտիվացված դաշտում՝ թուլացնելով մրցութային ընդունելության ոգին, հարմարվում են ստեղծված իրադրությանը: Նույնիսկ կրկնուսույցների մոտ ընդունելության քննություններին լրացուցիչ պարապող դիմորդները ձևական են հաճախում պարապմունքներին (առավելապես ծնողների պարտադրանքով՝ բարձր պահելու սեփական վարկանիշը): Կրթության կազմակերպման փորձով ապացուցված է, որ կրթական բազմահարկ շինության բոլոր հարկերը (կրթական կոնվեյերի մեջ

մտնող բոլոր օղակները)՝ հատկապես ստորինները, պետք է լինեն շատ ամուր, և մեկը մյուսի համար հաջորդաբար նախադրյալներ ստեղծեն, հակառակ դեպքում կունենանք այն, ինչ այժմ ունենք: Ըստ առանձին կրթական ծրագրերի, տարանջատ, առանց հաշվի առնելու համակարգի մեկը մյուսին նախորդող ու հաջորդող օղակներում ընթացող ներդաշնակ ու փոխպայմանավորված բարեփոխումների հնարավոր չէ հասնել դրական արդյունքի: Որպես մեթոդական հետևություն՝ բարձրագույն դպրոցի առջև ծառացած խնդիրների լուծումը պետք է սկսել հանրակրթական դպրոցից սկսած:

Ընդգծենք, որ ամենատարբեր պատճառներով առաջացած դիմորդների պակասը, բուհերի գրեթե ամբողջությամբ ինքնաֆինանսավորումը, դեռևս թույլ պատրաստվածություն ունեցող դպրոցների շրջանավարտների առկայությունը և այլն, խիստ դժվարություններ են առաջացնում բուհերում ՄԿԾ-երի արդյունավետության բարձրացման համար: Մինչդեռ ներկայում տեսական գիտելիքի ստացման բազմաթիվ աղբյուրներ են ի հայտ եկել: Դրանցից ամենաարդյունավետը, յուրաքանչյուր դասընթացի ու թեմայի բովանդակությունից ելնելով, ուսուցման բազմամեթոդայնությունն է: Բոլոր պարագաներում առաջին հարթակում պետք է գտնվի ուսանողը, ով իր ստեղծագործական-հետազոտական հմտություններով կիրականացնի գործնական բնույթի նախագծեր: Մեթոդական բազմազանությունը, որը որպես և՛ տեսական, և՛ գործնական նշանակության գիտելիքի մատուցման նախապայման կդառնա ուսուցման արդյունավետ բանալի, կօգնի ժամանակակից երիտասարդ մանկավարժներին, ովքեր քանակական առումով դեռևս ոչ մեծ տեսակարար կշիռ ունեն մանկավարժ-դասախոսների կազմում՝ լուծելու բարձրացված հիմնախնդիրը: Հետևաբար դասախոսական կազմի մասշտաբային վերապատրաստումների համակարգի ներդրումն այսօր դարձել է անհրաժեշտություն:

Երկրորդ՝ գիտելիքի ապահովման գործնական հմտությունների զարգացման ուղղությունը նոր կառուցվածքների ձևավորման միջոցով ենթադրում է մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացում: Սա ուսուցման արդյունավետության բարձրացման կարևոր ուղղություն է, սակայն լուծման տեսակետից կախված է մի շարք բարդություններից: Դեռևս չձևավորված տնտեսության ոլորտային կառուցվածքի և գործող ոլորտների թերզարգացվածության պատճառով բուհ-գործատու համագործակցությունը նույնպես թերզարգացած է: Նկատենք, որ բուհական առկա մասնագիտությունների և տնտեսության կառուցվածքի ու պահանջարկի միջև դեռևս նկատվում է անհամապատասխանություն:

Գործատուն, գտնվելով բիզնեսի ձևավորման փուլում, ջանքեր է գործադրում դրա կայացման ու զարգացման համար՝ առանց համագործակցելու իր պրոֆիլի մասնագիտություն ունեցող բուհերի հետ: Մյուս կողմից էլ բուհերը ծրագրային պահանջների ապահովման, մասնագետ-մանկավարժների պատրաստվածության և հատկապես համապատասխան արտադրությանը մոտ գործնական կարողությունների զարգացման կառուցվածքների ապահովվածության տեսակետից լիարժեք պատրաստ չեն խնդիրը լուծելու համար: Առաջացել է մի փակ շղթա: Արտադրական և սպասարկման ոլորտները դեռևս անպատրաստ են ուսանողների արտադրական պրակտիկան նոր հիմունքներով և արդյունավետ կազմակերպելու, իսկ բուհերը միայն սեփական հնարավորություններով (ենթակառուց-

վածքներով) հարցը լուծելու համար անջատված են: Հետևաբար այլ տարբերակներով հարցին անդրադառնալու անհրաժեշտություն է առաջացել:

Գործնական հմտություններով մասնագետ-շրջանավարտի պատրաստման բոլոր գործառույթները ունեն երկակի պատկանելություն: Դա նախևառաջ բուհի խնդիրն է: Նա պետք է որպես հետաքրքրված կողմ ուսումնաարտադրական նոր մշակույթ հիմնի թե՛ բուհի, և թե՛ գործատուի համար: Նշված խնդիրը լուծելու համար ըստ նախապատվության և հնարավորությունների կարող են լինել մի քանի տարբերակներ: Խնդիրը նպատակահարմար է լուծել առավելապես գործատուի ներգրավմամբ, սակայն բուհը նույնպես այդ հարցում ունի որոշակի պարտավորվածություններ, որոնց իրականացմամբ կարող են առաջանալ զանազան միակողմանի, երկկողմանի և միջանկյալ համագործակցային ստորաբաժանումներ: Եվրասիա միջազգային համալսարանում կուտակված փորձը ենթադրում է՝

1. բուհը, համագործակցելով գործատուների հետ, գործող բիզնեսի ձեռնարկություններում կազմակերպում է ուսանողի գործնական հմտությունների զարգացման գործընթաց երկկողմանի փոխշահավետ պայմանագրերի հիման վրա: Պայմանագիրը կնքվում է մի կողմից գործատուի՝ որպես գլխավոր շահառուի պատրաստակամությունը ամրագրելու և լիարժեք պայմաններ ստեղծելու կամ հետագայում աշխատանքի ընդունման հարցերով, մյուս կողմից բուհի պարտավորվածությունը՝ տեսական գիտելիքներով պրակտիկանտների վերարտադրության գործում, որովհետև բուհն ունի բարձր շահագրգռվածություն՝ ապահովելու իր շրջանավարտին մասնագիտական աշխատանքով,
2. գործատուն, իր երկարաժամկետ նպատակներից ելնելով, բուհում ստեղծում է իր բնույթին մոտ արտադրական կամ սպասարկման ոլորտի կարողություններ, և ուսանողները զուգահեռաբար տեղում ստանում են և՛ տեսական, և՛ գործնական հմտություններ ու կարողություններ,
3. բարձրացված հիմնախնդրի լուծման համար կարող են կազմակերպվել հմտությունների զարգացման նպատակային մասնագիտական կենտրոններ, որոնք կարող են բուհի և գործատուի միջև միջանկյալ դեր խաղալ: Որպես լրացուցիչ գործառույթներ իրականացնողներ՝ այս կենտրոնները կարող են իրականացնել և՛ բուհի, և՛ գործատուի պարտականությունները՝ երկկողմանի տեսական ու գործնական պարապմունքների անց-կացման վերապատրաստման և վերարակավորման ձևերով,
4. բուհը, իր երկարաժամկետ ռազմավարական նպատակներից ելնելով, ըստ մասնագիտությունների ստեղծում է ժամանակակից պայմաններով հագեցած, առավելագույն չափով գործատուների պայմանները և պահանջները բավարարող գործնական հմտությունների զարգացման ամբիոնային կենտրոններ,
5. բուհի ամբիոնը, ըստ մասնագիտությունների բնույթի, ձևավորում է մասնագիտական-ոլորտային բուհ-գործատու կլաստերներ, որոնք ինտեգրվում են բիզնեսի հետ, դիցուք՝ իրավաբանական և բիզնես կենտրոնների, փաստաբանական գրասենյակների, բանկերի, դասընթացների կենտրոնների ու դպրոցների, դեղագործական ընկերությունների և այլնի ձևով:

Եվրասիա միջազգային համալսարանն այս բնագավառում ունի որոշակի առաջընթաց: Ըստ հավատարմագրված մասնագիտական կրթական ծրագրերի՝ այստեղ գործում են.

ա) իրավաբանական կլինիկա՝ որպես մասնագիտական, մասնավորապես համայնքի բնակչությանը ուսանողների կողմից անվճար իրավաբանական-փաստաբանական աջակցության կամ խորհրդատվության գրասենյակ: Այս գրասենյակում կողքկողքի աշխատում են փորձառու և հմուտ իրավաբան մասնագետներն ու ուսանող-պրակտիկանտները՝ վերջիններիս պատրաստելով մասնագիտական աշխատանքի,

բ) բիզնես կենտրոն, որտեղ հիմնականում ընդգրկված են բիզնեսի աշխարհում հայտնի գործատուներ, ովքեր ուսանող-պրակտիկանտների մոտ զարգացնում են տնտեսագիտական և մենատիրական հմտություններ, անցկացնում ինքնուրույնաբար բիզնես հիմնելու գործնական պարապմունքներ: Այս կենտրոնի պրակտիկանտները նույնպես համայնքի բնակչության համար անվճար հիմունքներով անցկացնում են խորհրդատվություններ, աջակցում նրանց բիզնես-ծրագրերի մշակման հարցերում: Կենտրոնը առանձնահատուկ է նաև նրանով, որ նպաստում է ուսանողներին նախագծերի ձևով հանձնարարված հետազոտությունների իրականացմանը, մասնագիտության շրջանակներում այս կամ այն նեղ մասնագիտակցման մեջ խորացմանը, մասնագիտական կրթական ծրագրերի բարելավմանը՝ հօգուտ գործնական պարապմունքների անցկացման: Փաստորեն բուհում միայն տեսականացված ուսուցմանը փոխարինում է տեսական և գործնական բնույթի զուգակցված ուսուցումը, որը, ինչպես ցույց է տվել եվրոպական առաջավոր բուհերի փորձը, էապես բարձրացնում է գործնական ուսուցման արդյունավետությունը: Այս պարագայում շատ մեծ է բուհի պատասխանատվությունը, և մեծ են միջբուհական մրցակցային առավելությունները: Կենտրոնը կարող է զարգանալ և վերածվել թեմատիկ ու պրոբլեմային հետազոտությունների լաբորատորիայի, աջակցել ավագ դպրոցների աշակերտներին մասնագիտական կողմնորոշման հարցում և այլն,

գ) մասնագիտական թարգմանչության և լրացուցիչ՝ լեզուների պրակտիկ ուսուցման դասընթացների անցկացման կենտրոն՝ համայնքի բնակչության օտար լեզուների ուսուցման մակարդակի բարձրացման, թոշակառու հասակի բնակչության լեզվական կարողությունների բարելավման, դպրոցականների շրջանում անգլերեն, գերմաներեն և ֆրանսերեն լեզուներով բանավոր խոսքի զարգացման, միջազգային ուսանողների լեզվական հմտությունների զարգացման համար:

Համալսարանի ռազմավարական ծրագրով նախատեսված է ըստ լիցենզավորված մասնագիտությունների ստեղծել նաև մասնագիտական ստեղծագործական կարողությունների և հմտությունների զարգացման համար անհրաժեշտ նոր ստորաբաժանումներ՝ լրագրողական դպրոց, տեղեկատվական տեխնոլոգիաների հետազոտական լաբորատորիա, դեղաբույսերի արտադրության կենտրոն, համալսարան-վարժարան մանկավարժական հմտությունների զարգացման կենտրոն և այլն:

Ժամանակակից պահանջներով շրջանավարտ-մասնագետների պատրաստման առկա դրական նախադրյալների առկայության դեպքում ՄԿԾ-ների նկատմամբ պահանջարկը դեռևս թույլ է, իներցիոն, միատիպ մեթոդաբանությամբ: Անհրաժեշտություն է առաջացել ուսուցման բազմամեթոդաբանության միջոցով ակտիվացնել ու մոտիվացնել գլխավոր շահառուին՝ ուսանողին, ով արդեն, որպես մասնագիտական գործնական հմտություններով օժտված մասնագետ, պետք է ակտիվ դերակատարություն ունենա ուսուցման գործընթացում:

Օգտագործված գրականության ցանկ

1. Մ. Ավագյան, Ք. Ծատուրյան «ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակի օգտագործման ուղեցույց»,Ե.,2017:
2. Ա. Բուդաղյան, Ա. Գրիգորյան «Արդյունահեն դասընթացների և կրթական ծրագրերի մշակում», Ե., 2017:
3. Ս.Օհանյան, Ի. Բաբայան «Համալսարանական կառավարման բարելավման մի քանի հարցեր», ԵՄՀ Բանբեր, Ե., 2017, N.1:

Сурен Оганян
Ректор Международного университета Евразия
Доктор географических наук, профессор
Ирина Бабаян
Проректор по учебной и научной работе
Международного университета Евразия

РАЗВИТИЕ ПРОФЕССИОНАЛЬНЫХ НАВЫКОВ В КАЧЕСТВЕ МЕТОДИЧЕСКОГО КОМПОНЕНТА ПРОГРАММЫ ПРОФЕССИОНАЛЬНОГО ОБРАЗОВАНИЯ

В статье представлены основы развития практических навыков выпускников, пути их решения, в частности опыт Международного университета Евразия в развитии структурных подразделений.

Ключевые слова: профессиональные навыки, работодатель, просторные, кафедры, бизнес-центр, юридический консультационный центр, отраслевая структура, университетская инфраструктура, центр переводов, образовательная программа и т. д.

Suren Ohanyan
Rector of Eurasia International University,
Doctor of Geographical Sciences, Professor
Irina Babayan
Vice-President of Educational Affairs Eurasia International University

THE DEVELOPMENT OF PROFESSIONAL SKILLS AS A METHODOLOGICAL COMPONENT OF PROFESSIONAL EDUCATIONAL PROGRAMMES

The paper presents the basics for the development of practical skills of graduates, ways of its solution, in particular the justifications of Eurasia International University's experience related to the development of structural subdivisions.

Key words: professional skills, employer, spatial and temporal, chairs, business center, legal consultation center, sectoral structure of the economy, university infrastructure, translation center, educational program, etc.